

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐՍՈՅԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀՈԳԵԾԻՆ ՁԱՒԱԿԻ ՄԵՐՈՒՄ ՍԻՐԵԼԻՈՅ՝ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Երեսփոխանական ժողովը վերընտրել է Ձեզ առաջնորդ՝ առաջնորդական պաշտոնավարության երկրորդ քառամյակի համար: Այս երեւույթը իմաստին նշանակ է, որ ժողովրդի ընտրած ներկայացուցչական մարմինը գոհ է Ձեզնից և Ձեր պաշտոնավարությունից: Նա վերընտրել է Ձեզ միաձայն և որոտընդոստ ծափերով ու մեծ խանդավառությամբ, որ նշանակ է նորա հատուկ գոհունակության: Այս երեւույթը նույնպես նշանակալից է և ուշադրության արժանի: Անկախ վերոհիշյալից, մենք հետևել ենք Ձեր գործունեությանը, Լոնդոնից սկսած, ուր հովվական պաշտոն էիք վարում: Ձեր Լոնդոնի հովվական պաշտոնավարությունը հիմք ծառայեց հրավիրելու Ձեզ շատ ավելի պատասխանատու պաշտոնի, որպիսին է առաջնորդի պաշտոնը, որը և հաստատվեց հոգևոր բարձր իշխանության կողմից: Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմում առաջին քառամյակի Ձեր առաջնորդական պաշտոնավարությունը ապացույց հանդիսացավ հավաստիացնելու, որ Դուք եկեղեցուն և Ազգին նվիրված նշմարիտ հոգևոր պաշտոնյա եք, ուսումնասիրել եք նոցա կարիքները, և սպեղանի դնելով նոցա վերքերի վերա, ջանադիր եք նոցա բուժման հանապարհները հարթելու: Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմում, տեսնելով կրքված և ժողովրդին ու

Եկեղեցուն նվիրված բանանայության անհրաժեշտությունը, Դուք հանդուգն փորձեր արիք այդ բացը գոցելու, մինչև իսկ շեղվելով Հայ Եկեղեցու սովորույթի օրենքից: Եվ Մենք՝ տեսնելով ձեռնարկիդ նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը՝ ներողամիտ վերաբերմունք ցույց տվինք:

Մենք տեսանք Ձեր հանախակի այցելությունները թեմիդ զանազան կենտրոններին՝ նոր եկեղեցիներ կառուցելու, նպատակահարմար միություններ կազմակերպելու և ժամանակակից որոշ գաղափարներ արծարծելու նպատակով, որոնք հանախ պսակվել են հաջողությամբ և գնահատվել Մեր կողմից:

Դուք միշտ հետևելիս եք եղել թեմական կանոնադրությունը կատարելագործելու, փորձելով նորա թերությունները վերացնել և հարմարեցնել այն Ձեր թեմի պահանջներին:

Դուք անկեղծորեն ջանացել եք, համաձայն մեր հրահանգների, հյուսիսային ամերիկահայության անջատյալ փոքրիկ հատվածը միացնելու կենտրոնական համայնքին, և եթե Ձեր ջանքերը հաջողությամբ չեն պսակվել՝ պատճառը ոչ Մենք ենք և ոչ Դուք:

Անկախ առաջնորդական պաշտոնից, Դուք մեծ աշխատանք եք կատարել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի օգտին, հատկապես տնտեսական ասպարեզում՝ ի կատար ածելով Մեր պատվերները, առանց հապաղման հոգացել եք նորա կարիքները:

Այնուհանդերձ, դեռ շատ ձեռնարկներ կան անելիք թե՛ առաջնորդական, թե՛ Ս. Էջմիածնի կուլտուրական և թե՛ ազգային-եկեղեցական այլ ասպարեզներում, ուր Ձեր եռանդը, Ձեր շնորհքները ու Ձեր հոգեկան ուժերը օգտագործելու նպատակ ունինք ի շահ հայ ժողովրդի և վերածնվող Հայրենիքի, ի պատիվ Ձեզ և ի մխիթարություն Մեզ:

Ի տրիտուր Ձեր այս բեղմնավոր աշխատանքների և ի բաջալերություն ապագայի, սույն հայրապետական կոնդակով Մենք շնորհում ենք Ձեզ արքեպիսկոպոսի տիտղոս և պատիվ, միանգամայն վստահ լինելով, որ Դուք, հետ այսորիկ պիտի կրկնապատկեք Ձեր եռանդն ու ջանքերը առավել ևս օգտակար լինելու Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և մեր հայրենի երկրին, ի հանգստություն Ձեր խղճի, ի մխիթարություն հայ ժողովրդի և ի գոհունակություն Մեզ:

Ողջ լերուք շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ, ամէն:

ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն մայիսի 1951
Փրկչական ամի և ի տումարիս Հայոց ՌՆ,
յԽօրենեարդ ամի Հայրապետութեան մերոյ,
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ